**Հայտարարություն**

**«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի թիվ 1 մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ:**

**Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն**

Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, որոնք ունեն՝

- ✓ բարձրագույն կրթություն,
- ✓ «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով սահմանված չափանիշները բավարարող անձը
- ✓ իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր):

**Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝**

1. տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
2. ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն,
3. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
4. աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ,
5. ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն,
6. առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

**Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը**, ով՝

1. դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ
2. տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

3. օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն,

4. դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,

5. զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից, կամ որին օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել,

6. ներկայացրել է փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում սույն կարգի 12-րդ կետով սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ թերի են,

7. 65 տարին լրացած քաղաքացիները:

**Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը**.

1. դիմում,
2. մեկ լուսանկար` 3X4,
3. քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին,
4. ինքնակենսագրություն,
5. անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք` նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները,
6. տեղեկանք` մշտական բնակության վայրից
7. հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերի պատճենները` բնօրինակի հետ միասին, ներկայացնում է անձամբ` անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

**Մրցույթն անցկացվում է երկու փուլով`**

1. թեստավորում
2. հարցազրույց

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ` անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:

Տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթն անցկացվում է բաց եղանակով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, ժամը՝ 09:00-18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետը՝ 16.05.2023թ. ներառյալ:

**Մրցույթը տեղի կունենա՝ 26.05.2023թ.-ին, ժամը՝ 11:00:**

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Մեծամորի համայնքապետարան (ք. Մեծամոր, վարչական կենտրոն 1շ.):

Հեռ.՝ 060656505